

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի N 03-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Արովյան համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող նախագիծը մշակվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների համաձայն:

Անհրաժեշտություն է առաջացել Արովյան համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 9-ի «Արովյան համայնքի սեփականություն համարվող հողամասերի վրա կառուցված ինքնական շինություններն օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» N 03-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ, քանի որ 2019 թվականի ընթացքում նախատեսվել է օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել Արովյան համայնքի սեփականություն համարվող հողամասերի վրա ինքնական կառուցված 432 ավտոտնակներ, 15 արտադրական, 35 բնակելի և 29 հասարակական նշանակության կառույցները, սակայն օտարվել կամ վարձակալության իրավունքով տրամադրվել են ինքնական կառուցված 58 ավտոտնակներ, 2 արտադրական, 3 բնակելի և 13 հասարակական նշանակության կառույցներ:

Արովյան համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 9-ի «Արովյան համայնքի սեփականություն համարվող հողամասերի վրա կառուցված ինքնական շինություններն օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» N 03-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Արովյան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում, ինչպես նաև Արովյան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ